5132

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՌԵԳԻՍՏՐԻ ԵՎ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N <<ԴՄԻԳ-ՇՀԾՁԲ-15-11/6-3>>

ք. Երևան <<09>> 04 2015թ.

Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության աշխատակազմն ի դեմս աշխատակազմի ղեկավար **Արմեն Գևորգյանի**, որը գործում է Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, **«ՄԵՅՍԻՍ ԻՆՖՈՐՄԵՅՇՆ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Արմեն Մանուկյանի** (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների ռեգիստրի եվ գործընթացների ավտոմատացված կառավարման միասնական համակարգի ստեղծման ծառայությունների» մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել Կատարողից հետ վճարելու Կատարողին վճարված գումարները, ինչպես նաև սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 **Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը և պահանջել Կատարողից հետ վճարելու Կատարողին վճարված գումարները, ինչպես նաև սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը և 5.3 կետով նախատեսված տույժը:** Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել N1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 N1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 N1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը ընդունվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն

ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության **2(երկու)** օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը **2(երկու)** (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի N1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10(տաս) աշխատանքօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **91500000(իննսունմեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է **հանձման-ընդունման արձանագրության հիման վրա(ըստ սույն պայմանագրի N1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված փուլերի)**՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան **25.12.2015թ.**:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

/ Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պայմանների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի միջև փոխադարձ պարտավորությունների կատարման ավարտը, բայց ոչ ուշ քան **2015թ դեկտեմբերի 25-ը**:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ

...ությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ...ված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների ...ցումը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է **4(չորս)** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Արդարադատության նախարարության աշխատակազմ	**«ՄԵՅՍԻՍ ԻՆՖՈՐՄԵՅՇՆ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ**
Ք. Երևան, Հալաբյան 41ա	**ք. Երևան, Դ. Անհաղթի 23/22**
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	**«Ամերիաբանկ» ՓԲԸ**
հ/հ 900011002764	**հ/հ 1570003653770100**
ՀՎՀՀ 02506264	**ՀՎՀՀ 01555207**
	էլ. հասցեն՝ info@masys.am
	Հեռ. (010)209100 (093)435557
(ստորագրություն)	(ստորագրություն)
M.P.	M.P.

Հավելված 1
«09» 07 2015 թ. կնքված
N ԴՈՒԳ-ՇՀՇՁԲ-15-11/6-3 ծածկագրով գնման պայմանագրի

ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՌԵԳԻՍՏՐԻ ԵՎ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	**Մատակարարման նկարագիրը**	Ծառայության մատուցման փուլերը	Ձեռքբերվող Ծառայության տեխնիկական նկարագիրը	Գինը՝ ըստ մատուցված ծառայության փուլերի/ՀՀ դրամ/
1.	**Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների ռեգիստրի և գործընթացների ավտոմատացված կառավարման միասնական համակարգի ստեղծման ծառայություններ**	**Փուլ 1-ին**	2015 թվականի հոկտեմբերի 1-ից ուժի մեջ է մտնում "Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման մասին" ՀՀ օրենքը (այսուհետ՝ օրենք): Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է շարժական գույքի ցանկը՝ անշարժ չհամարվող ցանկացած գույք, ներառյալ՝ կանխիկ դրամական միջոցները, ապագայում ձեռք բերվելիք շարժական գույքը և գույքային իրավունքները, մտավոր սեփականության օբյեկտինկատմամբ գույքային իրավունքները, շարժական գույքի լիզինգի պայմանագրից ծագող վարձակալության իրավունքները, սեփականության իրավունքի պահպանմամբ առք ու վաճառքի իրավունքը, շրջանառության մեջ	**45000000 (քառասունհինգ միլիոն ՀՀ դրամ)**

			գտնվող ապրանքները, պահանջի իրավունքները, մեկ տարի և ավելի ժամկետով կնքված շարժական գույքի վարձակալության իրավունքը, կոմիսիայի առարկա շարժական գույքի նկատմամբ ի րավունքները, օդանավերը, հաստոցները, սարքավորումները, գյուղատնտեսական տեխնիկան, գյուղատնտեսական մթերքները, կենդանիները և թռչունները, ներմուծված, սակայն չմաքսազերծված շարժական գույքը և այլ շարժական գույք: Իսկ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքները գրանցվում են միասնական էլեկտրոնային գրանցամատյանում: Մինչև գրանցամատյանի ձևավորումը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորվում է համապատասխան մարմինը շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցում իրականացնելու համար: Գրանցամատյանը ձևավորելու համար անհրաժեշտ է ստեղծել խմբագրիչ և ծրագրային ապահովում, որը թույլ կտա գրանցումը իրականացնող լիազորված մարմնի աշխատակիցների կողմից կառուցել շարժական գույքերի և դրանց իրավունքների նկարագրությունները, որոնց հիման վրա ավտոմատ կկառուցվի տվյալների բազա: Համակարգի կողմից տրամադրված վեբ պորտալը	

			հնարավորություն կտա ավտոմատացված օն-լայն ձևաչափով մատուցել շարժական գույքի ապահովված իրավունքների ռեգիստրի ծառայություններ քաղաքացիներին, գրանցել շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքները: Ծրագրային ապահովման նպատակն է մշակել համակարգ և խմբագրիչ, որը հնարավորություն կտա կառուցել գույքի նկատմամբ նոր իրավունքներ, սահմանել դրանց դաշտերը, ավտոմատ ստեղծել աղյուսակներ տվյալների բազայում և մուտքագրման պատուհաններ, որոնք թույլ կտան գրանցել շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքները, շարժական գույքի նկատմամբ նախկինում կատարված գրանցումներում իրականացնել փոփոխություններ, հավաքագրել միասնական էլեկտրոնային գրանցամատյանում շարժական գույքի նկատմամբ գրանցված ապահովված իրավունքները,, դադարեցնել շարժական գույքի նկատմամբ գրանցված ապահովված իրավունքները, ինչպես նաև որոնման գործիքի միջոցով բացահայտել շարժական գույքի նկատմամբ երրորդ անձանց կողմից գրանցած ապահովված իրավունքների առկայության մասին: Նպատակն է մշակել համակարգ, որը ունիվերսալ է և թույլ է տալիս հատուկ խմբագրիչի օգնությամբ նկարագրել և	

			ներառել շարժական գույքը, գույքի նկատմամբ ապահովված իրավունքի տեսակը, ինչպես նաև ապահովված պարտատիրոջ և պարտապանի վերաբերյալ տվյալներ: Համակարգի խմբագրիչի օգտագործողներն են լինելու գրանցումը իրականացնող մարմնի աշխատակիցները, իսկ համակարգի ամբողջ ֆունկցիոնալը պետք է աշխատի դինամիկ ձևով նկարագրված օբյեկտների հետ: Միասնական ռեգիստրը հնարավորություն կտա հասնել հետևյալ նպատակներին. 1. ապահովված անձի կողմից պարտապանի վերաբերյալ տեղեկատվությունը ստանալ մեկ ռեգիստրից. 2. գրացնել ինչպես Օրենքով նախատեսված, այնպես էլ ցանկացած այլ տեսակի շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունք, 3. էլեկտրոնային ստորագրության առկայության դեպքում փաստաթղթերը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, իսկ թղթային տարբերակով փաստաթղթերը ներկայացնել միայն նոտարական գրասենյակների միջոցով. 4. ռեգիստրում գրանցված տեղեկատվությունը հասանելի դարձնել առցանց եղանակով: **1. Համակարգի ընդհանուր**	

			կառուցվածքը Համակարգը պետք է պարունակի առնվազն հետևյալ կատեգորիաները և/կամ բաժինները՝ • շարժական գույք (գույքի նկարագիրը) • շարժական գույքի նկատմամբ գրանցվող ապահովված իրավունքի տեսակ, այդ թվում իրավունքների գրանցում, փոփոխում և դադարում, • պարտատիրոջ տվյալներ, • պարտապանի տվյալներ: Համակարգի կողմից տրամադրվող խմբագրիչի կողմից պետք է հնարավորություն լինի վերը թվարկված հասկացողությունների համար կառուցել համապատասխան օբյեկտներ, արդյունքում ձևավորել աղյուսակներ տվյալների բազայում: Համակարգը պետք է հնարավորություն տա խմբագրիչի միջոցով ընտրելով օբյեկտներ և ենթա-օբյեկտների դաշտերը՝ • ավտոմատ ստեղծել տեղեկատվության մուտքագրման, դիտարկում, խմբագրման պատուհաններ, • ընդունել այլ ռեգիստրներից ստացվող տեղեկատվական փաթեթները և ընթերցել դաշտի արժեքները, • կառուցել ստատիստիկական	

			հաշվետվություններ դրանց ագրեգացված արժեքներով: Համակարգը պետք է հնարավորություն տա շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքներ գրանցելու նպատակ ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձանց անձամբ, ինչպես նաև նոտարներին՝ դիմող անձի կողմից նոտարական սպասարկման գրասենյակ դիմում ներկայացնելու դեպքում, օն-լայն ռեժիմում մուտք գործելով համակարգ գրանցել խմբագրիչում նկարագրած շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքը, ներմուծել պարտատիրոջն ու պարտապանին նույնականացնող տեղեկատվություն կամ այն ստանալ Ծրագրի հետ համատեղ աշխատող բնակչության պետական գրանցման ռեգիստրից և գրանցել պարտատիրոջ գույքային իրավունքները՝ պարտատիրոջ ցանկության դեպքում մուտքագրելով իրավունքի ծագման համապատասխան իրավական հիմքեր: Համակարգը պետք է հնարավորություն տա որոնման գործիքի կիրառմամբ ցանկացած պահի ստանալ պարտապանի՝ այլ պարտատերերի կողմից ծանրաբեռնված շարժական գույքի նկատմամբ գրանցված իրավունքների իրավական ստատուսի, ներառյալ դրանց առկայության, կատարված փոփոխությունների և դադարման	

			վերաբերյալ: Համակարգը պետք է տրամադրի համապատասխան պատուհաններ և խմբագրիչ, գրանցումը իրականացնող մարմնի աշխատակիցներին, որոնք պետք է կարողանան հայտարարագրեն՝ • նոր շարժական գույքի տեսակներ, գույքի կատեգորիաներ, բնութագրիչ դաշտեր, • գույքային իրավունքների տեսակներ, բնութագրիչ դաշտեր, • գույքային իրավունքների ռեգիստրեր, ռեգիստրի կողմից տրամադրվող շարժական գույքի և դրա նկատմամբ իրավունքի գրառումներ, այդ գրառումների ստացման ձևը, ժամկետները ու կարգը: Համակարգը պետք է տրամադրի վեբ ինտերֆեյսներ գրանցումը իրականացնող անձանց համար, որի օգնությամբ անձը պետք է կարողանա՝ • գրանցել խմբագրիչում նկարագրված շարժական գույքը՝ գրանցումը իրականացնող մարմնի կողմից սահմանված տեսակի համապատասխան, գրանցել գույքի նկատմամբ իրենց իրավունքի տեսակը և հիմքերը, • հայտարարագրել շարժական գույքի նոր տեսակի գրանցման պահանջարկի հայտ (եթե գրանցումը	

			իրականացնող անձը չի գտնում գույքի տեսակը որը ցանկանում է գրանցել համակարգում, որը կարող է բավարարվել կամ մերժվել), • գրանցել գույքի և գույքի նկատմամբ իրավունքների փոփոխության փաստը, • ըստ իրավունքի տեսակների և շարժական գույքի կատեգորիաների դիտարկել իրենց կողմից գրանցված գույքերը, կատարել փնտրումներ և ֆիլտրումներ դրանցում, • էլեկտրոնային մատյանների օգնությամբ տեսնել իրենց կողմից սկսած գրանցումների, իրավունքների փոխանցման կամ այլ գործընթացների ցուցակը, իրականացնեն փնտրումներ և ֆիլտրումներ դրանցում ըստ որոշակի դաշտերի, • իրենց կողմից գրանցված գույքի համար տեսնել այլ օգտագործողների կողմից գրանցված նույն գույքի իդենտիֆիկացված կամ ըստ որոշակի դաշտերի համախմբի նման գույքերի ցուցակները, Համակարգը պետք է հնարավորություն տա խմբագրիչի օգնությամբ դինամիկ ձևով կառուցված շարժական գույքերի, գույքային իրավունքի տեսակների, դրանց հետ աշխատող գործընթացների համար,	

			խմբագրիչում կառուցված նկարագրությունների միջոցով գեներացնել ստատիստիկական հաշվետվություններ, որի օգնությամբ հնարավոր է տեսնել ընդհանուր քանակային տեղեկատվություն: Ինչպես նաև, ամեն մի քանակային արժեքի համար համակարգը պետք է հնարավորություն տա ստանալ դրա համար հիմք հանդիսացող՝ շարժական գույքերի, գույքերի նկատմամբ իրավունքների, անձանց և գործընթացների բազմությունները: **2. Ապահովող գործառույթերը և գործիքային միջոցները** Համակարգը պետք է աշխատի միասնական էլեկտրոնային կառավարման ձևաչափի շրջանակներում: Համակարգը պետք է կառուցվի և օգտագործի "BARL Framework" –ի գործիքային միջոցները, որը պետք է ապահովի համահունչ ինտեգրացիա այլ գերատեսչությունների համակարգերի հետ: Ծառայությունը մատուցող կողմը պետք է ներկայացնի "BARL Framework" –ի օգտագործման իրավունքները: **2.1. Շարժական գույք, գույքի կատեգորիա և գույքի բնութագրիչներ** Ծրագրում շարժական գույքի նկատմամբ իրավունքներ գրանցելու համար կստեղծվի համապատասխան ծրագրային	

			ապահովում, որը թույլ կտա ըստ դասակարգման հատկանիշների ընտրել շարժական գույքի տեսակը՝ իր բնութագրիչներով: Համակարգը պետք է հնարավորություն տա շարժական գույքի գրանցումը իրականացնող մարմնին հատուկ խմբագրիչի օգնությամբ ստեղծել գրանցման ենթակա շարժական գույքի նոր տեսակներ և ենթատեսակներ՝ իրենց բնութագրիչ դաշտերով: Ծրագրային համապատասխան ահապոհման շնորհիվ խմբագրիչի միջոցով շարժական գույքի գրանցումը իրականացնող մարմնի աշխատակիցը, առանց ծրագրավորողի օգնության պետք է կարողանա խմբագրիչից ավտոմատ կերպով ստանալ գույքի մուտքագրման, դիտարկման և խմբագրման պատուհաններ, փնտրումների ֆիլտրացման պատուհաններ և փնտրման արդյունքների ամփոփ աղյուսակի սյունակներ: Համակարգը պետք է օգտագործողի կողմից կմուտքագրվածի տեղեկատվության հիման վրա ավտոմատ կերպով ստեղծել տվյալների բազաների աղյուսակներ, որոնցում օգտագործողը կկարողանա կատարել փնտրումներ ըստ պարտապանի, պարտատիրոջ և/կամ շարժական գույքի վերաբերյալ տվյալների նկարագրության: Համակարգը շարժական գույքի համար	